

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ.
21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ:

Տիգրան Զարգարյան
Հայաստանի ազգային գրադարան

Յուրաքանչյուր ազգի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը կապված է աշխարհագրական այն վայրի հետ, որը կրում է նույն այդ ժողովրդի անունը, այն վայրի հետ, ուր հարյուրամյակներ շարունակ, ապրել ու ստեղծագործել է տվյալ էթնիկական կազմության մեծամասնությունը, հետագա դարերին ժառանգություն թողնելով ուրույն մշակութային արժեքներ: Հայ ազգի դեպքում պատկերը փոքր ինչ այլ է: Բազմադարյա պատմության ընթացքում հայ ազգը ստեղծագործել, և հաջորդ սերունդներին է ժառանգել մշակութային եզակի արժեքներ աշխարհի գրեթե բոլոր ծագերում: Արժեքների այս ցուցակի մեջ իրենց արժանի տեղը ունեն թե՛ հայ գրիչների կողմից ստեղծած ձեռագիր մատյանները և թե՛ գրատպության հնատիպ և վաղ շրջանների տպագիր նյութերը՝ գրքեր, հանդեսներ, քարտեզներ, հմայիլներ, որոնք տասնյակներով սփռված են աշխարհով մեկ՝ գրադարաններում, հայագիտական կենտրոններում, մասնավոր հավաքածուներում, ընտանեական գրադարաններում, որոշներն էլ մոռացության մեջ, լքված և ծածկված փոշով, սպասում են այն բաղձալի օրվան, երբ կհաշվառվեն և իրենց արժանի տեղը կգտնեն որևէ մասնագիտական գրադարանում:

Հայերեն առաջին գիրքը տպագրվել է 1512 թ. Վենետիկում, Հակոբ Մեղապարտի ջանքերով, Գուտենբերգի կողմից Եվրոպայում մետաղական շարժական տառերով առաջին տպագրահաստոցի ներկայացումից գրեթե 70 տարի անց: Իսկ մետաղական շարժական տառերով առաջին տպագիր գիրքը դա «Ջիկջին» է, տպագրվել է 1377 թ. Կորեայում, բուդդայական վանականների ջանքերով:

Տպագրության նման տեխնիկան Չինաստանից բերվել է Եվրոպա Մարկո Պոլոյի կողմից: Այս մասին վկայում է ռուսահպատակ մոլորվացի դիվանագետ, ճանապարհորդ, քաղաքական և մշակութային գործիչ Նիկոլայե Մպատարիա-Միլեսկուն (Nicolae Milescu Spătaru), ով 1676 թ. ռուսական դիվանագիտական խմբի հետ այցելել է Չինաստան.

«Пушки лити, и ходити по морю матицами навыкли, **такожде и книги печатати от китайцев во Европе научились.** Понеже когда калмыки и татары взяли Китай, и с

ними пришли в Китай патер Одерик, и Антон армянин, и Марко Павел венецианин, и подлинно они во Европу из Китая те художества принесли»¹.

Գաղթելով պատմական Հայաստանի տարբեր գավառներից և սփռվելով աշխարհով մեկ, հարյուրամյակների ընթացքում ստեղծվում էր մեկ ընդհանուր, անդրտարածքային «Հոգևոր Հայրենիք»՝ եկեղեցական կենտրոններով, տպարաններով, կրթօջախներով, մշակութային միություններով: Մինգապուրից մինչև Պոլիս ու Ջոյունիս, Նոր Ջուղայից մինչև Սանկտ Պետերբուրգ ու Թեոդոսիա, Ամստերդամից մինչև Թիֆլիս, Շուշի, ու Բաքու, Իտալիայից մինչև Լվով ու Տրանսիլվանիա. «Հոգևոր Հայրենիքի» բոլոր կենտրոնները ոգեղեն թելերով կապված էին իրար հետ և հետամուտ էին մեկ ընդհանուր նպատակի. հայոց լեզվի պահպանություն, պետականության վերականգնում ու Հայրենիքի վերածնություն:

Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմամբ, համայն հայության դարավոր երազանքը դարձավ իրականություն, իսկ Հայաստանի Խորհրդի 1919 թ. հունիսի 5-ին ընդունված և Մինիստրների Խորհրդի 1919 թ. հուլիսի 4-ին հաստատված «Պետական Մատենադարանի մասին» օրենքով ստեղծվեց մի կառույց, որի առջև **«պետության մեջ գիտական գործունեություն զարգացնելու և հատկապես Հայաստան աշխարհի և իր սահմաններում ապրած և բնակվող ժողովուրդների և հարևան ժողովուրդների ու երկրների բազմակողմանի ուսումնասիրությանը նպաստելու»** խնդիրն էր դրված:

Այդ օրվանից սկսած, պետական մատենադարանում, ապա նրա իրավահաջորդ պետական հանրային գրադարանում /1925 թ.-ից/, իսկ 1990 թ.-ից նախորդ երկուսի իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի ազգային գրադարանում հավաքվում, մշակվում և պահպանվում են հայատառ տպագիր արտադրանքի նմուշները, որոնց թիվն այսօր հասնում է գրեթե 1միլիոն 110 հազարի: Դրանց թվում են հայերեն առաջին տպագիր գիրքը /տպագրիչ Հակոբ Մեղապարտ, 1512 թ., Վենետիկ/, հայերեն առաջին պարբերականը /«Ազդարար», 1794 թ., Մադրաս, Հարություն Շմավոնյան/, հայերեն տպագիր առաջին Աստվածաշունչը /1666 թ., Ամստերդամ/, Մխիթար Աբբահոր տպագրած Աստվածաշունչը /1733 թ., Վենետիկ/, հայերեն տպագիր առաջին քարտեզը՝ «Համատարած աշխարհացոյցը» /1695 թ., Վանանդեցիների տպարան, Ամստերդամ/, և բազմաթիվ այլ եզակի հրատարակություններ: Սրանք բոլորը գրադարանը որպես նվիրատվություն ստացել է տարբեր անհատներից:

Այսօր էլ, Ազգային գրադարանի ստեղծումից հարյուր տարի անց, իրենց արդիականությունը չեն կորցրել հայատառ **տպագիր նյութերի երկարաժամկետ**

¹ «Описание первыя части вселенныя, именуемой Азіи, в ней же состоить Китайское государство, съ прочими егò города ъ провинціи». Казань, 1910.

պահպանության և Հայաստանի ազգային գրադարանի հայաստառ հավաքածուների հետադարձ համալրման խնդիրները: Երկուսն էլ ունեն ռազմավարական նշանակություն, և մշտապես պետք է գտնվեն համայն հայության ուշադրության կենտրոնում:

Միյուրքի գաղթօջախներում արդեն ունենք **«լքված գրադարաններ»**. այդ հավաքածուները հիմնականում ձևավորվել են նախորդ դարի սկզբում անհատների ջանքերով, և իրենց փոխարինած երրորդ սերնդին այդ գրականությունն արդեն չի հետաքրքրում, այն դարձել է ավելորդ բեռ: Ունենք տկարացող գաղութներ, արտագաղթի բարձր ցուցանիշներով: Մարդիկ մեկնում են, գրականությունը մնում է անտերունչ: Նման գրականության ամենահուսալի և ապահով տեղը Հայաստանի ազգային գրադարանն է: Ուստի կոչ ենք անում համաժողովի մասնակիցներին, եթե տեղյակ են նման գրադարանների առկայության մասին, ՀՀ Մշակույթի, Միյուրքի, Արտաքին գործերի նախարարությունների խողովակներով, դրանց մասին տեղեկացնել Հայաստանի ազգային գրադարանին: Կամ ուղղակի կապ հաստատել Ազգային գրադարանի հետ:

Մյուս կարևոր խնդիրը դա Հայաստանի ազգային գրադարանի հայագիտական հավաքածուների հետադարձ համալրումն է: Կան հայաստառ տպագիր նյութեր, որոնք ինչ-ինչ պատճառներով, բացակայում են Հայաստանի գրադարաններից: Դրանք թե՛ հնատիպ գրքերն են, թե՛ վաղ շրջանի հրատարակությունները, և թե՛ մերօրյա տպագիր արտադրանքը: Միյուրքի հրատարակիչներին, գրքերի հեղինակներին հարկ է տեղեկացնել, որ իրենք ունեն մի մեծ առաքելություն. այն է՝ իրենց հրատարակություններից գոնե մեկական օրինակ տրամադրել Հայաստանի ազգային գրադարանին՝ ի պահ հաջորդ սերունդների: Այս հարցում ևս ակնկալում ենք Միյուրքի մեր գործընկերների աջակցությունը:

Մատենագետների հետազոտությունների շնորհիվ, հայտնաբերվում են մամուլի և գրքերի նմուշներ /դրանք հիմնականում ժամանակագրական առումով հին հրատարակություններ են/, որոնք ներառված չեն «Հայ գրքի» կամ «Հայ մամուլի» համահավաք մատենագիտական ցանկերում:

Օրինակ, վերջին երկու տարվա ընթացքում Հայաստանի ազգային գրադարանի մատենագետների ջանքերով հայտնաբերվել են մամուլի մինչ այսօր անհայտ հետևյալ անվանումները. **«Մանուկ»**, (Նոր Ջուղա, 1931թ.), **«Բաբելոն»**, (Բոստոն, 1919-1921թթ.), **«Նինուե»**, (Բոստոն, 1927-1928թթ.), **«Նոր Բաստիլյ»**, (Հալեպ, 1927թ.), **«Եռանդ»**, (Արդուին, 1918թ.), **«Մլաք»**, (Լոնդոն, 1965թ.), **«Մալը Մալին»**, (Հոմս, 1889-1920թթ.), **«Պապոշ»**, (Հոմս, 1889-1920թթ.): Դրանց թվային պատճենները արդեն առկա են ՀԱԳ-ում:

Գրքերի պարագայում ևս կան նորահայտ անուններ: Թվեմ մի քանիսը:

Նորահայտ անուններ, որոնք ձեռք ենք բերել:	Նորահայտ անուններ: Ունենք միայն թվային պատճենները:
Տետրակս այս որ կոչի քաղաքավարութիւն.- Կ.Պոլիս: Տպ. Հովհաննիսեան (Արապեան) Պօղոսի, 1806.- 47 էջ:	Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.- Վենետիկ: Տպ. Ս. Ղազար, 1820.- 723 էջ:
Տետրակ գովասանաց ի վերայ համօրէն.- Կ.Պոլիս: Ա.հ., 1813.- 60 էջ:	Վիկտորիայի այբբենարան. – Կալկաթա: Ի տպարանի Եպիսկոպոսական ճեմարանի, 1841.- 108 էջ:
Աստուածաշունչ : Գիրք Հին եւ Նոր Կտակարանաց : Յունական բնագրէն թարգմանուած. - Պէրուրթ : Տպագրութիւն Ամերիկեան տպարանի, 1925. – 2 չհամարակալված, 302 էրկայուն էջ:	Խրատ յաղագս բարուք առնելոյ գԱռանձնականն աղոթսն.- Կալկաթա, 1835.- 72 էջ:

Վստահաբար կարող եմ ասել, որ նման նորահայտ վերնագրեր կգտնվեն Սփյուռքի մեր հայագիտական կենտրոնների գրադարաններում, կամ անհատների հավաքածուներում: Բնական է, որ նման հրատակությունների մասին հարկ է տեղեկացնել Ազգային գրադարանին: Սրանով մենք բոլորս մեր փոքրիկ բայց շատ կարևոր ներդրումը կունենանք հայ տպագրության պատմության ամբողջացման հարցում:

21-րդ դարում համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաները իրենց վրա են վերցրել անդրտարածքային «Հոգևոր Հայրենիքի» կենտրոնների փոխկապակցվածության ապահովման խնդիրը: Մնում է կազմակերպել տեղեկատվության փոխանակումը այդ կենտրոնների միջև: Արագագործ և հուսալի կապուղու շնորհիվ Հայաստանում հնարավոր է դարձել ստեղծելու հայագիտական ուղղվածության թվային գրադարան և ապահովել հետազոտողների անարգել մուտքը այնտեղ առկա բովանդակային շտեմարաններին: Աշխատանքների ընդհանուր համակարգումը իրականացնում է Հայաստանի ազգային գրադարանը: Մեր առջև դրել ենք իրականացման առումով բավական բարդ ծրագիր. ստեղծելու **համահայկական թվային գրադարան**, որում արտացոլված կլինի հայ ազգի թողարկած

տպագիր ժառանգությունը՝ համապատասխան մատենագիտական գրառումներով, և հեղինակային իրավունքի դրույթները պահպանելով, գրառումներին կցված նյութերի թվային պատճեններով:

Ներկա պահին Հայաստանի ազգային գրադարանում ընթանում են չորս խոշորածավալ նախագծեր.

1. «Հայ գիրք» շտեմարանի ստեղծում:
2. «Հայկական շարունակական հրատարակությունների» համահավաք գրացուցակի ձևավորում:
3. «Հայաստանի ատենախոսությունների բաց մատչելիության պահոց» հանգույցի ստեղծում:
4. «Թվային էֆեմերա» /ազդագրեր, պաստառներ/ շտեմարանի ձևավորում:

Ազգային գրադարանը համակարգում է նաև «Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակի» ձևավորման աշխատանքները:

Թվայնացված է 8,138 գիրք, 2.1 միլիոն էջերի ընդհանուր քանակով: Շարունակական հրատարակությունների պարագայում ունենք 2 միլիոն 514 հազար թվայնացված էջ:

Խիստ ողջունելի է Սփյուռքի մեր գործընկերների մասնակցությունը այս աշխատանքներին, և հարկ է որ տեղերում առաջադրվեն պատասխանատուներ, ովքեր կապահովեն կապը Ազգային գրադարանի հետ:

Իր հերթին, Հայաստանի ազգային գրադարանը, պատրաստ է «վիրտուալ սպասարկող կայանների» տեսքով տրամադրելու հաշվողական հզորություններ, ծրագրային ապահովում և մեքենայական հիշողություն մեր գաղթօջախներում առկա նյութերի մատենագիտական նկարագրությունների համար, ինչպես նաև տրամադրել տեխնիկա աջակցելու դրանց մի մասի թվայնացմանը:

Ավարտելով զեկուցումը, ներկայացնում ենք առաջարկություններ, որոնց իրականացումը, մեր կարծիքով, մեծապես կնպաստի համահայկական թվային գրադարանի ստեղծմանը:

Առաջարկություններ:

1. Արտերկրի գրադարանների պատասխանատուների մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով Հայաստանի ազգային գրադարանում վերապատրաստման դասընթացների անցկացում:

2. ՀՀ կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել Սփյուռքում առկա և ազգային մտավոր ժառանգության մաս կազմող վտանգված, լքյալ, անուշադրության մատնված հավաքածուների և գրադարանների վրա: Փնտրել ուղիներ, դրանք Հայաստան տեղափոխելու համար:

3. Դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը՝ ֆինանսավորելու արտասահմանի գրադարաններին և հաստատություններին՝ հնատիպ ու հազվագյուտ գրքերի և պարբերական մամուլի թվայնացման գործընթացը տեղերում կազմակերպելու համար, այդ կառույցներին տրամադրելով թվայնացնող սարքեր:

4. Խթանել ՀՀ և Սփյուռքի գրադարանների միջև գրքափոխանակության աշխուժացումը՝ դրանում կարևորելով ինչպես ՀՀ մշակույթի, սփյուռքի, արտաքին գործերի նախարարությունների պատասխանատուների, այնպես էլ կրոնական կառույցների՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայ Կաթողիկե եկեղեցու և Հայ Ավետարանական եկեղեցու շահագրգիռ մասնակցությունը: